Վերջինս, Ղայբալիքենդի կոտորածից անմիջապէս յետոյ մի ընդարձակ հաղորդագրութեամբ դիմեց դաշնակից հրամանատարութեան ու հանրային կարծիքին՝ պնդելով, որ պատահած դէպքերի միակ պատասխանատուն դր. Սուլթանովն է: Ղարաբաղի հայ ազգաբնակութիւնն ու Ազգ. Խորհուրդը միշտ խուսափել են ընդհարումների առիթներ տալուց. նրանց գլխաւոր պահանջը եղել է՝ Ղարաբաղը նկատել վիճելի շրջան և այնտեղ հաստատել անգլիական չէզոք իշխանութիւն, մինչև որ սահմանների հարցը վերջնականապէս որոշուի: Հակառակ ծանր պայմանների, Ազգ. Խորհրդին յաջողուել է պահել հայ—թրքական խաղաղութիւնը և խուսափել բախումներից: Սուլթանովը Ղարաբաղ գալով՝ ձեռնարկում է յարձակողական քայլերի՝ որոշելով դէնքի ուժով հնազանդեցնել հայկական շրջանները: Հանդիպելով դիմադրութեան՝ դիմում է բռնութեան և պրովոկացիայի, հայերի դէմ դրգռում է մահմեդական տգէտ զանգուածներին ու քոչւորներին և գործիք դարձնում քիւրդ հրոսախմբերը: 580 հայ է սպանուել Ղարաբաղում, և այդ արեան պատասխանատուութիւնն ամբողջապէս ընկնում է Սուլթանովի վրա: Մանրամասնօրէն թուելով Ղարաբաղի դէպքերը՝ Ազգ. Խորհուրդը հաւատացնում է, որ Շուշին դրաւելը դեռ ևս Ղարաբաղի նուաճում չի նշանակում և որ ո՛չ մի համաձայնութեան չի կարելի հասնել Սուլթանովի հետ: Յայտնում է նոյնպէս, որ շուտով դիմաբուելու է Ղարաբաղի հայութեան 6րդ համագումարը, որը նորից քննութեան կառնէ իր և Ազրբէջանի փոխյարաբերութեան հարցը:

Նոյն իմաստով դեկուցում բերեց և Շատելվորթի ներկայացուցիչ գնդ. Գլատերբերդը, որը ուղարկուել էր Ղարաբաղ ծանօթանալու համար կոտորածների մանրամասնութիւններին: Նա ևս պնդում էր, որ կոտորածի ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է Սուլթանովի վրա, որը նախօրօք քաղաքի և Ղայբալիքենդի մօտերը դրել էր քրդական խմբեր և նրանց միջոցով ջարդել հայերին: Եթէ Սուլթանովը կամենար, կոտորած չէր լինի և անդորրութիւնը Ղարաբաղում չէր խանգարուի: Գնդ. Գլատերբերդը առաջարկում էր պատասխանատուութեան ենթարկել Սուլթանովին:

Միևնոյն պահանջի վրա պնդում էին և Ազրբէջանի Խորհրդարանի հայ պատգամաւորները, որոնց կողմից պատգամաւոր Պ. Զուբարը գնացել էր Ղարաբաղ, տեղն ու տեղը ուսումնասիրել դէպքերը և նոյնպէս յանդել այն եզրակացութեան, որ պատահածների ամբողջ պատասխանատուն Սուլթանովն էր: Խորհրդարանում արտասանած իր ընդարձակ ճառով Զուբարը բազմաթիւ փաստերով ու պաշտօնական վաւերագրերով հաստատեց, որ Ղայբալիքենդի և միւս գիւղերի կոտորածը Սուլթանովի գործն էր: Խորհրդարանը, սակայն, դտաւ, որ Ղարաբաղի «տեղական իշխանութեանց և, ի մասնաւորի, ընդհանուր-նահանգապետի գործողութիւնների մէջ չկայ ապօրինութեան և ոչ մի փաստ»:

Ղայբալիքենդի կոտորածների և անգլիացիների հեռանալու տպաւորութեան տակ, Սուլթանովի հրաւէրով, յունիս 28-ին, Վարանդայի Շոշու գիւղում (Շուշիից 4 վերստի վրա) հաւաքուեց Ղարաբաղի 6րդ համագումա-